ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 257-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.02.19-2024.03.03 Պաշտոնական հրապարակման օրը 23.02.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	23.02.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	23.02.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	24.02.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՉ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՄԹԵՐՔԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 257-Ն

ՈՉ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՄԹԵՐՔԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 14.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի առգրավման և ոչնչացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 23-ի N 257-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՉ ՍՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՄՈՐԹԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀՈՒՄՔԻ ԵՎ ՄԹԵՐՔԻ ԱՌԳՐԱՎՄԱՆ ԵՎ ՈՉՆՉԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի առգրավման և ոչնչացման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը տարածվում է ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի բոլոր փուլերում գործառնություն իրականացնող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ), ինչպես նաև սույն կարգով սահմանված փոխադրումը և ոչնչացումն իրականացնող կազմակերպությունների նկատմամբ:

3. Պետական վերահսկողության ընթացքում ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումք և մթերք հայտնաբերելու դեպքում ամբողջ խմբաքանակի իրացումը ենթակա է կասեցման, առգրավման և ոչնչացման:

4. Եթե տնտեսավարող սուբյեկտը խոչընդոտում է պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձի (այսուհետ՝ տեսուչ) գործունեությանը, ապա տեսուչը կազմում է արձանագրություն դեպքի վերաբերյալ, որում նշվում է նաև կասեցմանը և առգրավմանը խոչընդոտած տնտեսավարող սուբյեկտի անունը, ազգանունը, իսկ տրանսպորտային միջոցի առկայության դեպքում՝ դրա հաշվառման համարը, և տեղեկատվությունն անմիջապես փոխանցում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը՝ տնտեսավարող սուբյեկտին հայտնաբերման դեպքում վարույթն իրականացնող մարմնին տեղեկացնելու նպատակով: Պետական վերահսկողության իրականացմանը խոչընդոտելը դիտվում է որպես տնտեսավարող սուբյեկտի կողմից Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին վերապահված իրավունքների կամ պարտականությունների կատարմանը խոչընդոտում:

5. Եթե պետական վերահսկողության շրջանակներում պարզվում է, որ կենդանական ծագման հումքը և մթերքը չունեն սպանդանոցային ծագում, ապա այդ կենդանական ծագման հումքի և մթերքի ամբողջ խմբաքանակն առանց փորձաքննության ենթարկելու ենթակա է ոչնչացման՝ այրման եղանակով ոչնչացումն իրականացնող կազմակերպության կողմից:

6. Տեսուչը ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումք և մթերք հայտնաբերելու դեպքում կասեցնում է ամբողջ խմբաքանակի իրացումը՝ միաժամանակ ընդունում է առգրավման մասին որոշում՝ հետագա ոչնչացման նպատակով: Որոշման ձևը սահմանվում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:

7. Տեսուչը ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակն առգրավելուց հետո կշռում, փաթեթավորում է պոլիէթիլենային թաղանթով, կապարակնքում և առանձին հաշվառում է՝ կազմելով հանձնման-ընդունման ակտ երկու օրինակից՝ համաձայն N 1 ձևի: Հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտին, իսկ երկրորդ օրինակը մնում է տեսուչի մոտ:

8. Տեսուչն առգրավված խմբաքանակը հանձնում է տրանսպորտային ծառայություններ մատուցող անձին կամ կազմակերպության աշխատակցին (այսուհետ՝ փոխադրող)՝ ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակը ոչնչացումն իրականացնող կազմակերպություն փոխադրելու համար:

9. Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակը փոխադրողին, իսկ վերջինիս կողմից ոչնչացումն իրականացնող կազմակերպությանը փոխանցելը հաստատվում է հանձնման-ընդունման ակտով՝ համաձայն N 2 ձևի: Սույն կետով նախատեսված հանձնման-ընդունման ակտը կազմվում է երեք օրինակից: Հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը տրամադրվում է փոխադրողին, մյուսը՝ ոչնչացումն իրականացնող կազմակերպությանը, իսկ երրորդը մնում է տեսուչի մոտ:

10. Փոխադրողն ապահովում է ամբողջ խմբաքանակի տեղափոխումը ոչնչացումն իրականացնող կազմակերպություն:

11. Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի ոչնչացման վերաբերյալ կազմվում է ոչնչացման ակտ երկու օրինակից՝ համաձայն N 3 ձևի: Ոչնչացումն իրականացնող կազմակերպությունը ոչնչացման հաջորդ օրը ոչնչացման ակտի մեկ օրինակն առձեռն կամ էլեկտրոնային եղանակով փոխանցում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին:

Ձև N 1

ԱԿՏ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչ ----------.

պաշտոնը, անունը, ազգանունը

20—թ. ———ի ————ի «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակի առգրավման և ոչնչացման մասին» N --- որոշումը՝

————————----------

պաշտոնը, անունը, ազգանունը

և ----------

տնտեսավարող սուբյեկտի անունը, ազգանունը

կազմեցին հանձնման-ընդունման ակտը հետևյալի մասին։

---------- հանձնում է, իսկ ---------- ընդունում է ոչնչացման ենթակա

տնտեսավարող սուբյեկտի անունը, ազգանունը պաշտոնը, անունը, ազգանունը

արտադրանքի հետևյալ խմբաքանակը։

NN ը/կ	Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքը կամ մթերքը	Քաշը	Այլ նշումներ

Հանձնեց

_____

ստորագրությունը

_____

տնտեսավարող սուբյեկտի ազգանունը, անունը

Ընդունեց

_____

ստորագրությունը

_____

տեսուչի ազգանունը, անունը

Ձև N 2

ԱԿՏ

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչ ----------.

պաշտոնը, անունը, ազգանունը

20—թ. ———ի ————ի «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակի առգրավման և ոչնչացման մասին» N --- որոշումը՝

————————----------,

պաշտոնը, անունը, ազգանունը

_____ և _____

փոխադրումն իրականացնող անձի անունը, ազգանունը ոչնչացում իրականացնող կազմակերպության անվանումը

կազմեցին հանձնման-ընդունման ակտը հետևյալի մասին։

---------- հանձնում է, իսկ _____ փոխադրման

պաշտոնը, անունը, ազգանունը փոխադրողի անունը, ազգանունը

համար ընդունում և ---------- հանձնում է ոչնչացման ենթակա արտադրանքի

ոչնչացումն իրականացնող կազմակերպության ավանումը

հետևյալ խմբաքանակը։

NN ը/կ	Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքը կամ մթերքը	Քաշը	Այլ նշումներ

Սննդամթերքի խմբաքանակը ենթակա է փոխադրման ----------:
ոչնչացումն իրականացնող մասնագիտացված
կազմակերպության անվանումը, հասցեն

Հանձնեց	Փոխադրման համար ընդունեց	Ոչնչացման համար ընդունեց
_____	_____	_____
ստորագրությունը	ստորագրությունը	ստորագրությունը
_____	_____	_____
պաշտոնը, անունը, ազգանունը	փոխադրումն իրականացնող անձի ազգանունը, անունը	կազմակերպության աշխատակցի ազգանունը, անունը

Ձև N 3

ԱԿՏ

ՈՉՆՉԱՑՄԱՆ

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեսուչի ---------- ներկայությամբ,
պաշտոնը, անունը, ազգանունը
հիմք ընդունելով Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 20—թ. ———ի ————ի «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի և մթերքի խմբաքանակի առգրավման և ոչնչացման մասին» N --- որոշումը՝ ----------
ոչնչացումն իրականացնող մասնագիտացված կազմակերպության անվանումը
ոչնչացրեց արտադրանքի հետևյալ խմբաքանակը՝

NN ը/կ	Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքը կամ մթերքը	Քաշը	Այլ նշումներ

կազմակերպության ղեկավարի/փոխարինողի անունը, ազգանունը, ստորագրությունը

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 23 փետրվարի 2024 թվական: